



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՅԱԶՈՂՈՒԹԱՄԲ ԱՄԱՐՏԵՑ ԻՐ 39ՐԴ ԸՆԹԱՑԻԿ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

- Ս. ԱԹՈՂՈՅՍ ԳԱՀԱԿԱԼ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ
- ՄԵԾԱՐԱՆԸ՝ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԵՆ ՏՈՔԹ. ՅԱԿՈՒ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովը իր 39րդ նստաշրջանը գումարեց Ուրբաթ, 13 Եւ Շաբաթ, 14 Մայիսին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան Եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ հիւրընկալութեամբ Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Նստաշրջանին բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 13 Մայիսի կեսօրէ ետք ժամը 3ին, հաւաքական աղօթքով, զոր առաջնորդեցին Առաջնորդ Սրբազանն ու հոգեւորականաց դասը: Ներկայ էին Հոգեւոր հովիւներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Կրօնական ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներ, հոգաբարձութեանց ատենապետներ եւ Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի անդամներ, Տնօրէններ ու մանկամտւորներու վարիչներ:

Առաջին հերթին, Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեանը, որպէսզի ընթերցէ սոյն ժողովին ուղղուած՝ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութեան խօսքն ու պազամը:

Վեհափառ Հայրապետը կ'ողջունէր ժողովիս մասնակիցները, որոնք համախմբուած են քննարկելու տարուած աշխատանքին արդիւնքն ու ծրագրելու նորը: Նորին Սուրբ Օծութիւնը կը նշէր, որ Ազգ. Երեսփոխանական ժողովները պէտք է կարեւորութեամբ քննարկեն ընդհանրական հարցեր՝ մտահոգութիւններ ու մարտահրաւերներ, ի մտի ունենալով, որ եկեղեցւոյ դերը՝ ժողովուրդի կեանքին մասնակցութեան մէջ կը կայանայ: Վեհափառ Հայրապետը կ'անդրադառնար Հայ Դպրոցին ապագային ապահովման լուրջ հարցին. «Այսօր, ձեր համայնքէն ներս հայ դպրոցին ապագան լուրջ հարց մըն է, որ կը կարօտի իրապաշտ քննարկման: (...) Հայ Դպրոցը Մեզի համար նուիրական կառոյց մըն է, մեր

եկեղեցւոյ կողքին: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իր համազգային առաքելութեան շրջագծէն ներս, յատուկ շեշտ դրած է հայ դպրոցին վրայ: Վստահ ենք, որ նոյն այս ոգիով պիտի շարունակէք մօտենալ հայ դպրոցին», կը նշէր Ն. Ս. Օծութիւնը, միաժամանակ շեշտելով գաղութի մը կենսունակութեան մէջ ծուխերուն վերապահուած հիմնական դերը, հետեւաբար, կ'ընդգծէր անոնց աշխոյժ գործունեութեան հրամայականը: Վերջապէս, Վեհափառ Հայրապետը ժողովին ուշադրութեան կը յանձնէր, որ յառաջիկայ Հոկտեմբերին, Թեմիս իր շնորհելիք հովուապետական այցելութեան առանցքները պիտի ըլլան հոգեւոր կեանքը, հայ դպրոցն ու ազգային պահանջատիրութիւնը: Վեհափառ Հայրապետը կ'եզրափակէր՝ գնահատանք արձանագրելով Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան աշխատանքներուն մասին:

### **ԴԻՎԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, ՄՐՏԻ ԽՕՍՔԵՐ**

Ժողովը արժամեայ դիւանի ատենապետ ու ատենադպիր ընտրեց Տեարք Յարութ Պէշլեանն ու ճէք Հաճինեանը:

Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան հրաւիրուեցաւ արտասանելու իր սրտի խօսքը: Ան ողջունեց ներկաները, գոհունակութիւն յայտնեց այս ժողովին մասնակցութեան համար, եւ վեր առաւ կարգ մը առաջադրանքներ, ինչպէս՝ ընդարձակել մեր աշխատանքի դաշտը, ներգրաւելով արժանաւոր ազգայիններ, երիտասարդացնել մեր գործող անդամները, նաեւ միշտ ձգտիլ բարելաւել աշխատանքի որակն ու տարողութիւնը: Ան նաեւ կարեւորութեամբ անդրադարձաւ Վեհափառ Հայրապետին յառաջիկայ Հոկտեմբերի այցելութեան ծրագիրին, որպէսզի մեր ժողովականութեան բոլոր անդամները այժմէն իսկ գործակցաբար լծուին Վեհափառի այցելութեան պատրաստութեան:

Ազգային Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան յանուն վարչութեան ողջունեց ներկաները, անդրադարձաւ Ազգ. Երեսփոխանական Ժողովի դերին ու աշխատանքին՝ իբրեւ հայելին մեր Թեմին ու ծխական շրջաններուն, եւ հրաւիրեց քննարկումներն ու ծրագիրներու մշակումը կատարելու առողջ քննարկումով ու դրապաշտ մօտեցումով, որպէսզի ժողովը ոչ միայն անցեալի նախաձեռնութիւններուն շարունակութիւնը ըլլայ, այլ նաեւ գերազանցէ նախընթացները՝ բերելով նորութիւններ:

Հիւրընկալ եկեղեցւոյ անունով ողջոյնի խօսք արտասանեց հոգեւոր հովիւր՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան:

Իր պատգամը ուղղելէ առաջ, Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց ներկաները՝ յոտնկայս աղօթքով յարգելու անցեալ մէկ տարուան ընթացքին մեզմէ առյաւետ բաժնուած հոգեւորականներու եւ ազգայիններու յիշատակը: Ան իր աղօթքին մէջ յիշատակեց երջանկայիշատակ Տ. Սմբատ Արք. Լափաճեանը, Տ. Գառնիկ Զինյ. Տերտերեանը, Վիգէն Շաղգոյեանը, Տոքթ. Ճէյքըպ Ուրֆալին, Յակոբ Տէյիրմէնճեանը, Տոքթ. Յասմիկ Թաշճեանը, Կարպիս Շիւրրտմեանը, Տոքթ. Մայքըլ Յակոբեանն ու երեցկին Վարդուհի Թորոսեանը:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԻՆ ՊԱՏՉԱՄԸ

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին փառք տուաւ Աստուծոյ, որ առիթ ընծայած է տարի մը եւս ծառայելու մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին, ապա նաեւ երախտագիտութեան խօսք ուղղեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, իր հետեւողական հոգածութեան համար, նշելով, որ յառաջիկայ Յոկտեմբերին, մեր Թեմը յատուկ առիթ մը պիտի ունենայ, վայելելով Նորին Ս. Օծութեան հովուապետական այցելութիւնը: Ան անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի պատգամներուն ու ուղեցոյցին՝ մեր Թեմի աշխատանքներուն համար, կանգ առնելով Հայ Կնոջ ու Հայ Մանուկի տարիներու հռչակման եւ այդ ծիրին մէջ իրագործուած թէ ընթացքի մէջ եղող աշխատանքներուն ու ձեռնարկներուն: Առաջնորդ Սրբազանը ողջունեց ժողովականութիւնն ու ծառայողները, գնահատանքով եւ շնորհակալական զգացումներով անդրադարձաւ անոնց ցուցաբերած նուիրումին ու գործակցութեան, ըսելով.- «Մեր աշխատանքներուն մէջ հանգրուան կազմող այս ժողովին առիթով, շնորհակալութեան եւ գնահատանքի խօսք ունիմ ձեզի, սիրելի ժողովականներ: Փաստօրէն, դուք բոլորդ, հոգեւոր եղբայրներ, երեսփոխաններ, հոգաբարձուներ, կրթական պատասխանատուներ ու դաստիարակներ, մեզի հետ լծակից եք մեր եկեղեցական, ազգային, կրթական ու յարակից դաշտերու մշակման գործին: Հաւաքական դրօշառչաւ մըն է որ կը կատարենք գործակցաբար, նուիրումով ու անսակարկ ծառայութեան ոգիով, հաւատալով, որ այսօր ցանուած սերմերը վաղը բազում արդիւնք պիտի տան, ինչպէս որ մեզ կանխող սերունդներուն սերմնացանի աշխատանքին արդիւնքը մենք կը վայելենք: Աշխատինք ու գործենք՝ ի մտի ունենալով Դանիէլ Վարուժանի սերմնացանին ակնարկող բանաստեղծութեան պատկերները. ցանենք՝ լեցուն ափերով ու առատօրէն, հատիկները տարածենք անպարագիծ, խնդրենք Աստուծոյ օրհնութիւնը եւ վստահ ըլլանք, որ վաղը, իւրաքանչիւր հատիկի դիմաց հարիւրաւոր հատիկներու արդիւնք պիտի քաղենք»:

Խօսելով Ազգ. Երեսփոխանական Ժողովի աշխատանքներուն մասին, ան ըսաւ, որ տարուած աշխատանքի քննարկման ու ծրագիրներու մշակման կողքին, պէտք է նկատի ունենալ որոշ մարտահրաւերներ: Ան յատկապէս կանգ առաւ եկեղեցական-ծխական կեանքն ու ուսումնական համակարգը աւելի եւս աշխուժացնելու պահանջին վրայ՝ մեր եկեղեցիներու անդամներու թիւին յաւելումը եւ ծխականներուն ներգրաւումը եկեղեցւոյ կեանքին մէջ, ինչ որ կը կարօտի միացեալ ու հետեւողական աշխատանքի. ան անդրադարձաւ նաեւ տնտեսական ընդհանուր տագնապին ու անոր ազդեցութիւններուն, որոնց համար, պէտք է բազմապատկել ճիգերը, չբաւականանալ ընթացիկ ու ընկալեալ միջոցներով, այլ անցնիլ անոնցմէ անդին՝ նոր միջոցառումներու եւ արտասովոր ծրագրումի: Ան իր խօսքը եզրափակեց ըսելով, որ այս մտածումներու բաժնեկցութեամբ, պաշտօնապէս բացուած կը յայտարարէ Ազգ. Երեսփոխանական Ժողովի 39րդը նստաշրջանը, եւ բարի երթ մաղթեց անոր աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանին պատգամէն ետք, ժողովը շարունակեց օրակարգի լուծումը: Մայուն դիւանի անդամ ընտրուեցան Տեարք Ներսէս

Մելքոնեան, Ներսես Դշոյեան (Ա. եւ Բ. ատենապետներ), Զրայր Ճերմակեան եւ Տիգրան Տեր Սարգիսեան (Ա. եւ Բ. ատենադպիրներ):

Ծխական շրջաններու հոգաբարձութեանց եւ ծխական յանձնախումբերու ատենապետներուն ու ներկայացուցիչներուն առիթ տրուեցաւ հակիրճ գեկուցումներ տալու իրենց աշխատանքի տարբեր մարզերուն՝ եկեղեցական-եկեղեցաշինական, երիտասարդական, տիկնանց միութեանց, դպրաց դասերու, կիրակնօրեայ դպրոցներու, դասախօսական եւ այլ բնոյթի ձեռնարկներու մասին. գեկուցումները կ'ընդգրկէին իրագործումներ, մարտահրաւերներ եւ յառաջիկայի ծրագիրներ:

Ազգ. Վարչութեան ատենապետուհին, առ ի տեղեկութիւն, ժողովականներուն ուշադրութեան յանձնեց շարք մը կետեր, որոնք իբրեւ յանձնարարութիւն ու թելադրանք, փոխանցուած էին հոգաբարձութեանց եւ տիկնանց միութիւններու համագումարին:

## **ՄԵԾԱՐԱԼԸ**

Բ. Նիստի սկզբնաւորութեան, երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը յայտարարեց, թէ Ազգ. Երեսփոխանական ժողովի վերջին տարիներու գեղեցիկ մէկ աւանդութեան համաձայն, պիտի մեծարուի Սոնթեպէլլոյի Ս. Խաչ Տաճարի նուրեալ ու բազմամեայ ծառայողներէն Տոքթ. Յակոբ Տիգրանեան, որ շուրջ քառասուն տարիներէ ի վեր անսակարկ կերպով կը ծառայէ Ս. Խաչ Մայր Տաճարին, իբրեւ սարկաւազ, հոգաբարձութեան երկար տարիներու անդամ եւ ատենապետ, երեսփոխան, նաեւ կարեւոր ներդրում ունեցած է Ազգ. Մեսրոպեան վարժարանին: Ան անդարարձաւ Տոքթ. Տիգրանեանի անհատական բարեմասնութիւններուն, նշելով, որ ան համեստ անձ է, ընտանիքի հայր, ծառայասէր բժիշկ եւ ազնիւ գործակից: Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ ան երախատաշատ ծառայութիւն տրամադրած էր երանաշնորհ Տ. Սմբատ Արք. Լափաճեանի, անոր հիւանդութեան տարիներուն: Կրօնական ժողովի ու Ազգ. Վարչութեան ատենապետներուն հետ միասին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց Տոքթ. Յ. Տիգրանեանին:

Տոքթ. Տիգրանեան յուզումով շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին, ու մաղթեց, որ բոլոր երեսփոխաններն ալ նուիրումով ծառայեն մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին, որովհետեւ մեր դերը ծառայութիւն է եւ ոչ թէ բաւարարուիլ պաշտօնով:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՅԱՏԱՆՔ ԵՒ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄ**

Օրակարգի իրերայաջորդ կետերով, Ազգ. Երեսփոխանական ժողովը քննարկեց գործադիր իշխանութեանց աշխատանքին արդիւնքը, յաւելեալ լուսաբանութիւններ ուզեց եւ ստացաւ իրագործուած աշխատանքներուն մասին: Այս բոլորին լոյսին տակ, բանաձեւի յանձնախումբը Առաջնորդ Սրբազան Զօր, Կրօնական ժողովին ու Ազգային Վարչութեան միամեայ նիւթաբարոյական գործունեութիւնը գտաւ «Յոյժ Գովելի», ինչ որ որդեգրուեցաւ ժողովին կողմէ:

Ժողովի երկրորդ օրուան աշխատանքները կեդրոնացան յառաջիկայ մէկ տարուան ծրագիրներու մշակման վրայ: Առաջարկներն ու թելադրանքները ընդգրկեցին եկեղեցական կեանքը, հոգեւոր դաստիարակութեան եւ դպրոցական-ուսումնական դաշտը, միջ-եկեղեցական աշխատանքները, երիտասարդական կեանքը, Վեհափառ Զայրապետի հովուապետական այցելութիւնը եւ հայեցի դաստիարակութեան առաջադրանքները: Տեղի ունեցան լիարժէք քննարկումներ ու խորհրդակցութիւններ, որոնց արդիւնքները արձանագրուեցան գործադիր իշխանութեանց փոխանցելի բանաձեւերուն մէջ:

Ազգ. Երեսփոխանական Ժողովի 39րդ նստաշրջանը վերջ գտաւ Շաբաթ յետմիջօրէին, դիւանի շնորհակալութեան խօսքով, Առաջնորդ Սրբազանին օրհնութեան խօսքով եւ փակման աղօթքով: Զրաժեշտէ առաջ, ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա»ն:

## **PRELACY 39<sup>TH</sup> REPRESENTATIVES ASSEMBLY CONCLUDES**

- PREPARATIONS UNDERWAY FOR THE PONTIFICAL VISIT OF H.H. CATHOLICOS ARAM I
- DR. HAGOP DIKRANIAN OF HOLY CROSS CATHEDRAL HONORED FOR HIS DEDICATED SERVICE

On the afternoon of Friday, May 13<sup>th</sup>, 2010, the 39<sup>th</sup> Prelacy Representatives Assembly convened at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of clergy members, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, delegates, Boards of Trustees Chairmen, Board of Regents members, and Prelacy Schools’ principals and directors. This year’s Assembly was hosted by the Board of Trustees of St. Garabed Church of Hollywood.

The Assembly officially convened with the opening prayer led by the Prelate and clergy members, after which Very Rev. Fr. Barthev Gulumian read the message of H.H. Catholicos Aram I.

In his message His Holiness stressed that the Representatives Assembly must pay special attention to general issues, concerns, and challenges relating to our church, keeping in mind that the role of our church is fulfilled through the participation of the people. The Pontiff also spoke of the importance of strengthening Armenian Schools and of the direct correlation between the livelihood of our churches and communities. With regards to the Pontifical visit in October, H.H. stated that the visit will focus on spiritual renewal, our national aspirations, and the continued progress of Armenian schools. His Holiness concluded his message by commending the dedicated service of the Prelate, Councils, Delegates, and Assembly participants.

The provisional divan was elected with Mr. Harout Beshlian as Chairman and Mr. Jack Hadjinian as Secretary.

Central Executive Council Mr. Khajag Dikijian was then invited to deliver his remarks. Mr. Dikijian reflected on the importance of expanding and enhancing our endeavors, drawing in new community members and a new generation of church members, and of working together in unison to prepare for the Pontifical visit of His Holiness in October.

On behalf of the Executive Council, Chairlady Mrs. Rima Boghossian welcomed the participants, and wished that the Assembly will be an opportunity not only to analyze past activities but a forum for new ideas and suggestions.

Remarks were also delivered by Archpriest Fr. Vicken Vassilian on behalf of the host parish.

Prior to his message, the Prelate invited the participants to join him in prayer for those we lost during the past year. Prayers were offered for the blessed memory of Archbishop Sumbat Lapajian, Rev. Fr. Karnig Derderian, Vigen Shaghzoian, Dr. Jacob Orfali, Hagop Deirmenjian, Dr. Hasmig Tashjian, Garbis Shekherdeman, Dr. J. Michael Hagopian, and Yeretsgin Vartouhi Torossian.

The Prelate first gave thanks to Almighty God for granting another year to serve our church and community. He expressed his thanks to H.H. Catholicos Aram I for his paternal care and wisdom which is the guiding force of our endeavors and mission, and speaking on the Pontifical visit of His Holiness, expressed confidence that with joint efforts the visit will be a historic and memorable one. He also conveyed his appreciation to clergy members, delegates, and educators for their service, stating that they are entrusted with a mighty task and must carry out their responsibilities with the conviction that the seeds they sow today will bear immeasurable fruit for future generations.

The Prelate noted that the Annual Assembly is an opportunity to review the endeavors of the previous year but also an opportunity to collectively discuss how we can learn from and build on past accomplishments and expand and advance our mission. He then brought to their attention a number of important issues, most notably the importance of revitalizing our churches and schools, and formulating means of easing the financial situation of our churches and schools affected by the global economic crisis. The Prelate concluded his message urging the participants to work together as members of one family for the splendor of our church, schools, and communities, and wished success to the Assembly's proceedings.

The election of the permanent divan followed, with Mr. Nerses Melkonian and Mr. Nerses Teshoian elected Chairmen, and Mr. Herair Jermakian and Mr. Dikran Der Sarkissian as Secretaries.

Subsequently, each parish representative was called to the podium to report to the Assembly on the undertakings and achievements of their respective parishes over the past year.

Mrs. Boghossian then briefed the Assembly on suggestions and recommendation made at the meeting that was held the prior evening with the Pastors, Boards of Trustees, and Ladies Auxiliary Guilds.

Prior to the start of the second session, the Prelate reminded the delegates of the tradition of honoring a devoted servant of our Prelacy during the Assembly. This year's honoree was Dr. Hagop Dikranian, who has served Holy Cross Cathedral of Montebello for the past forty years as a deacon, Board of Trustees member and Chair, and delegate, and is also a devoted supporter of Mesrobian School. The Prelate spoke of Dr. Dikranian as a humble family man, a dedicated doctor, and devoted servant of our church, and lauded him for his exceptional care of the late Archbishop Lapajian especially during his last years when he was in failing health. Along with the Religious and Executive Council Chairs, the Prelate presented Dr. Dikranian with a memento in commendation for his dedicated service.

Dr. Dikranian thanked the Prelate for the honor, and urged all the delegates to serve with devotion, stating that their role is to actively serve our church and communities.

During the second session, the annual financial report and auditing committee report was presented, as well as briefings by the Religious and Executive Councils and the Board of Regents. The Assembly found the activities of the Prelate, Councils, and committees serving under their auspices to be "highly commendable".

The Assembly reconvened on the morning of Saturday, May 14<sup>th</sup>. During the day's two sessions, proposals were offered for the endeavors of the coming term, with emphasis on the Pontifical visit of His Holiness in October, Parishes activities, youth groups, ecumenical activities, and school and educational issues.

The Assembly concluded in the afternoon with the divan's closing remarks and the Prelate's closing message and prayer, after which participants sang the Cilician anthem.